

Հայտարարություն

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկորդ Ծրագիր

No: 5398-AM

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկորդ Ծրագիր» վարկային ծրագրի շրջանակում «Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի լիարժեք գործունեության ապահովման համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորման մոդելների մշակման ծառայությունների» առաջադրանքը իրականացնելու նպատակով հայտարարվում է խորհրդատվական ընկերության ընտրության մրցույթ:

Այս առաջադրանքի նպատակն է ԻՄԾՀ-ի լիարժեք գործունեության իրականացման ապահովման համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորման արդյունավետ մոդելների (մեխանիզմների) մշակումն և ներդրումը:

Ընտրված խորհրդատվական ընկերությունը պետք է իրականացնի հետևյալ առաջադրանքները՝

1. Համակողմանիորեն վերլուծի՝

1.1 ԻՄԾՀ-ում ներառված մարմինների և դրանց՝ ՀՄԾԿ-ների տարածքում տեղաբաշխված ստորաբաժանումների (հիմնարկների) պահպանման ծախսերի և դրանց կողմից իրականացվող ծրագրերի ծախսերի ֆինանսավորման գործող մեխանիզմները՝ դրանց կողմից միասնական ընդունարանների միջոցով սոցիալական ծառայություններ մատուցելու տեսանկյունից՝ բացահայտելու համար դրանց իրավական և փաստական բացերը, հաշվի առնելով այդ համակարգի մոդելային փոփոխությունների ուղղությամբ ընթացող գործընթացները,

1.2 բոլոր վճարումները մեկ միասնական մարմնի կողմից իրականացնելու ուղղությամբ ընթացող գործընթացները, այդ թվում՝ ՎԻՄՊՄ-ի գործունեության կարգավորման ուղղությամբ ընդունված իրավանորմատիվային փաստաթղթերը, դրամական վճարումների գործառնությունները ՎԻՄՊՄ-ին փոխանցելու մեխանիզմները սահմանելու և բոլոր դրամական վճարումները ՎԻՄՊՄ-ի միջոցով վճարելու գործընթացում ծախսերի ֆինանսավորման մեխանիզմները սահմանելու նպատակով առաջարկությունների ներկայացման համար:

2. Մշակի ԻՄԾՀ-ի լիարժեք գործունեության ապահովմանն ուղղված ծախսերի ֆինանսավորման մոդելների (մեխանիզմների) առաջարկներ, որոնք պետք է ներառեն առաջարկներ ստորև բերված կառույցների ֆինանսավորման մեխանիզմների վերաբերյալ՝

2.1. ԻՄԾՀ-ի միջոցով բնակչությանը սոցիալական ծառայությունների տրամադրումը համակարգող ԱՍՀՆ-ի, ՍԱՊՕ-ի, ՀՀ մարզպետարանների կողմից ծախսերի ֆինանսավորման մեխանիզմների վերաբերյալ,

2.2. ՀՄԾԿ-ների տարածքում տեղաբաշխված ստորաբաժանումների (հիմնարկների) պահպանման ծախսերի և դրանց կողմից իրականացվող ծրագրերի ծախսերի ֆինանսավորման մեխանիզմների վերաբերյալ,

2.3. ՎԻՄՊՄ-ի կողմից իրականացվող վճարումների համար անհրաժեշտ միջոցների ֆինանսավորման մեխանիզմների վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ ոչ բոլոր ստորաբաժանումներն են տեղակայված ՀՄԾԿ-ում:

3. Նախորդ կետում ներառված կառույցների ֆինանսավորման մեխանիզմների վերաբերյալ առաջարկները պետք է ուղղված լինեն հետևյալ խնդիրների լուծմանը.

3.1. ԻՄԾՀ-ում ներառված մարմինների և դրանց՝ ՀՄԾԿ-ների տարածքում տեղաբաշխված ստորաբաժանումների (հիմնարկների) պահպանման ծախսերի համար պետական և համայնքային բյուջեների ծախսային բոլոր հոդվածներով նախատեսված ծախսերի ֆինանսավորման գործող մեխանիզմներում առկա անհամապատասխանությունների վերացմանը,

3.2. ԱՍՀՆ-ի աշխատակազմի կողմից՝ իր ենթակայությունից դուրս գտնվող ՍԱՏԳ(Բ)-ների աշխատակիցների կողմից իրականացված սոցիալական դեպքերի վարման (այդ թվում՝

տունայցերի) ծախսերի հաշվարկման սկզբունքների և ֆինանսավորման մեխանիզմների սահմանմանը՝ հաշվի առնելով, որ ոչ բոլոր ՍՄՏԳ(Բ)-ներն են տեղակայված ՀՄՏԿ-ներում:

3.3. ՎԻՄՊՄ-ի կողմից նպաստների և այլ դրամական վճարների իրականացման մեխանիզմների սահմանմանը՝ հաշվի առնելով, որ ՎԻՄՊՄ-ի ոչ բոլոր ստորաբաժանումներն են տեղակայված ՀՄՏԿ-ում:

3.4. ԱՍՀՆ-ի աշխատակազմի կողմից իր առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող ԶՊԳ-ի և ԲՄՓԳ-ի ու դրանց տարածքային մարմինների ծախսերի կենտրոնացված կարգով ֆինանսավորման մեխանիզմների սահմանմանը:

3.5. ԻՄՕՀ-ում ներառված մարմինների և դրանց՝ ՀՄՏԿ-ների տարածքում տեղաբաշխված ստորաբաժանումների (հիմնարկների) պահպանման ծախսերի և դրանց կողմից իրականացվող ծրագրերի ծախսերի ֆինանսավորման գործընթացի յուրաքանչյուր փուլի համար պատասխանատու ստորաբաժանումների ու պաշտոնատար անձանց, նրանցից յուրաքանչյուրի պատասխանատվության շրջանակի հստակեցմանը:

3.6. նշված ծախսերի ֆինանսավորման գործընթացների նկատմամբ վերահսկողական մեխանիզմների սահմանմանը:

4. Ներկայացնի սույն բանժի 3-րդ կետում նշված առաջարկների կիրարկումն ապահովող իրավական ակտերի նախագծեր:

5. Ներկայացնի Ֆինանսավորման առաջարկվող գործընթացի տեղեկատվական բաղադրիչի մշակման և էլեկտրոնային ենթահամակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքի նախագիծ:

6. Նախորդ կետերում նշված վերլուծությունները և առաջարկները (այդ թվում՝ համապատասխան իրավական ակտերի նախագծերը) ԱՍՀՆ համակարգի ԻՄՕՀ ներդրման համար պատասխանատու անձանց ներկայացնելու նպատակով կազմակերպի սեմինարներ:

Խորհրդատվական կազմակերպությունը պետք է ունենա՝

1. ֆինանսատնտեսագիտական վերլուծությունների, խորհրդատվության և հանրային կառավարման ոլորտում բյուջետային ֆինանսավորման համակարգերի նախագծման առնվազն հինգ տարվա փորձառություն,

2. բյուջետային ֆինանսական հոսքերի կառավարման, գործընթացների իրականացման, վերահսկման փորձ,

3. բյուջետային ֆինանսավորման համակարգերի նախագծման բարձր որակավորում ունեցող մասնագետներ,

4. ֆինանսական տեղեկատվական բաղադրիչի մշակման և էլեկտրոնային ենթահամակարգի նախագծման բարձր որակավորում ունեցող մասնագետներ,

5. բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխումներին և իրավական դաշտին քաջաձանդոք մասնագետներ:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են մինչեւ **սույն թվականի հոկտեմբերի 13-ը** ներկայացնել հետաքրքրվածության հայտեր անհրաժեշտ տեղեկություններով (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին մասնատիպ հանձնարարականների իրականացման փորձի, վերընշված պահանջներին բավարարող ամձնակազմի առկայության վերաբերյալ, աշխատակազմի կենսագրական թերթիկները եւ այլն) ստորել նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն պետական հիմնարկի
գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երևան 0010, Տիգրան Մեծի փողոց 4
Հեռախոս. (374 11) 910581
Էլ. փոստ. info@ffpmc.am